

## Արձանագրություն թիվ 10

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

12 ապրիլի 2017թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

### Օրակարգ

1. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:  
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:  
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ծրագրերի քննարկում և հաստատում:  
/զեկ.Հ.Ասատրյան, Ա.Խաչատրյան, Մ.Ստեփանյան, Մ.Հարությունյան/
4. 2017-21թթ. „Դիզայն” մասնագիտության ուսումնական պլանի քննարկում:

*ԼՄԵՑԻՆ* - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ըստ կուրսերի և

առարկաների /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Ջեկուցողը հիմնականում անդրադարձավ նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը ցածր է տվյալ կուրսի կամ ֆակուլտետային միջին ցուցանիշից, ինչպես նաև նրանց, որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է վերջիններից: Ա.Շ.Մարգարյանը հանձնարարեց, ամբիոններին պարզելու նրանց պատճառները և երկրորդ ընթացիկ քննությունների ու ստուգումների ժամանակ բացառել նմանատիպ թերացումները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - „Գծանկարի, գունանկարի և քանդակի” ամբիոնի վարիչ Հ.Մ.Ասատրյանը: Նա համակարծիք էր զեկուցողի հետ և միաժամանակ նշեց, որ վերոհիշյալ ամբիոնի դասավանդողների մասնակցությամբ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝ առաջադիմության միջին ցուցանիշը բարձրացնելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - 1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութի դասավանդման ձևերին ու մեթոդներին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել առաջարկներ երկրորդ ընթացիկ քննությունների անցկացման ձևի (գրավոր, բանավոր կամ թեստի հետ համակցված տեսական նյութեր) վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց, որ այն պատրաստ է եղել դեռևս առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը կազմելիս և համապատասխանում է ուսումնամեթոդական վարչության կողմից սահմանված ժամկետների հետ: Ա.Մարգարյանը տեղեկացրեց, որ ժամանակացույցի նախագիծը տեղադրված է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և փակցված է հայտարարությունների տախտակին՝ ի տես ուսանողների և դասախոսների:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Հ.Ասատրյանը, Դ.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված տեղեկատվության հետ և առաջարկեցին հաստատել այն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ հաստատելու այն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ուսումնական և արտադրական պրակտիկաների ղեկավարներից Ա.Խաչատրյանը, Հ.Ասատրյանը և

Ա.Չիբուխյանը, որոնք ներկայացրեցին իրենց կողմից կազմված ծրագրերի բովանդակությունը, անցկացման ձևերն ու մեթոդները: Նրանք մասնավորապես նշեցին, որ պրակտիկայի որոշ ժամանակահատված անհրաժեշտ է անցկացնել մասնաճյուղում. առաջին օրը՝ պայմանավորվածություններ ձեռք բերելու պրակտիկայի ընթացքում՝ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ, իսկ վերջին երկու օրվա ընթացքում՝ ամփոփելու այն:

**ՈՐՈՇԵՑԻՆ**՝ Պրակտիկայի կազմակերպման ծրագրերը հաստատել և ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկան Ա.Շ.Մարգարյանը և նշեց, որ 2017թ. ընդունելություն իրականացվելու է „Դիզայն” կրթական ծրագրով, նախորդ երեք տարիների փորձն ու դասավանդողների առաջարկությունները հաշվի առնելով անհրաժեշտություն է առաջացել վերանայել նախկին պլանները և հարկ եղած դեպքում կատարել փոփոխություններ: Զեկուցողը տեղեկացրեց, որ վերոնշյալ պլաններ քննարկվել են նաև „Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի” և „Գծանկարի, գունանկարի և քանդակի” ամբիոնների 15.03.2017թ թիվ 8 համատեղ նիստում և եղել են առաջարկություններ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**՝ Ս. Հովհաննիսյանը Հ.Ասատրյանը և նշեցին , որ համաձայն են և իրենց իսկ առաջարկներն են ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ**՝ վերոնշյալ առաջարկները ներկայացնել մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչություն՝ քննարկելու:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝  
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Շ.Մարգարյան  
Ք.Հ.Մխիթարյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՈՒՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2016-2017 ուս.տարի II կիսամյակ

**Առաքառհմություն**

*ընթ. ընճ. 1*

14/04/2017

| N:                                | Առարկայի անունը               | Ուս.քանակը |       | Միջին գնահ. |             | 0-6երի քանակը |       | 2,3-6երի քան. |       | 4-երի քանակը |       |
|-----------------------------------|-------------------------------|------------|-------|-------------|-------------|---------------|-------|---------------|-------|--------------|-------|
|                                   |                               | ընդհ.      | անվճ. | ընդհ.       | անվճ.       | ընդհ.         | անվճ. | ընդհ.         | անվճ. | ընդհ.        | անվճ. |
| <b>Դիզայն (գեղար)</b>             |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| <b>Կուրս Գ I</b>                  |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Գծանկարչություն -2+           | 7          | 3     | 3.57        | 4.00        |               |       | 3             |       | 4            | 3     |
| 2                                 | Գունանկարչություն-2           | 7          | 3     | 3.43        | 3.67        |               |       | 3             | 1     | 4            | 2     |
| 3                                 | Կտմազոցիցիա-2+                | 7          | 3     | 3.86        | 4.00        |               |       | 1             |       | 6            | 3     |
| <b>Կուրս Գ II</b>                 |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Գծանկարչություն-4+            | 9          | 3     | 3.00        | 3.00        |               |       | 9             | 3     |              |       |
| 2                                 | Գունանկարչություն-4           | 9          | 3     | 3.44        | 4.00        |               |       | 5             |       | 4            | 3     |
| 3                                 | Դիզայն նախագծում -2           | 9          | 3     | 3.44        | 4.00        |               |       | 4             |       | 5            | 3     |
| <b>Կուրս Գ III</b>                |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Գծանկարչություն-6+            | 10         | 3     | 2.40        | 3.33        |               |       | 8             | 2     | 1            | 1     |
| 2                                 | Գունանկարչություն-6           | 10         | 3     | 2.50        | 3.00        |               |       | 9             | 2     | 1            | 1     |
| 3                                 | Կտմազոցիցիա -6                | 10         | 3     | 2.10        | 2.00        |               |       | 7             | 2     |              |       |
| 4                                 | XV-XIXդար.արտ.արվ.պատ.+       | 10         | 3     | 2.10        | 2.00        |               |       | 7             | 2     |              |       |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ Դիզայն (գեղար)</b>   |                               |            |       | <b>2.91</b> | <b>3.30</b> |               |       |               |       |              |       |
| <b>Կիրառական արվեստ</b>           |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| <b>Կուրս ԿԱ II</b>                |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Կտմազոցիցիա-4+                | 7          | 3     | 3.14        | 4.00        | 1             |       | 2             |       | 4            | 3     |
| 2                                 | Քանդակագործություն-2+         | 7          | 3     | 3.00        | 3.67        |               |       | 4             | 1     | 2            | 2     |
| 3                                 | Գունանկարչություն-4           | 7          | 3     | 2.57        | 3.00        | 1             |       | 6             | 3     |              |       |
| 4                                 | Գծանկարչություն-4             | 7          | 3     | 2.29        | 3.00        | 1             |       | 6             | 3     |              |       |
| <b>Կուրս ԿԱ III</b>               |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Միջ.արտ.արվ.պատ.              | 7          | 2     | 2.71        | 3.00        | 1             |       | 5             | 2     | 1            |       |
| 2                                 | Հին շրջ.և վաղ միջ.հայ արվ.պատ | 7          | 2     | 2.57        | 3.50        | 1             |       | 3             | 1     | 2            | 1     |
| 3                                 | Գունանկարչություն-6           | 7          | 2     | 3.43        | 4.00        |               |       | 3             |       | 4            | 2     |
| 4                                 | Գծանկարչություն-6             | 7          | 2     | 3.43        | 4.00        |               |       | 3             |       | 4            | 2     |
| 5                                 | Քանդակագործություն -4         | 7          | 2     | 3.57        | 4.00        |               |       | 3             |       | 4            | 2     |
| 6                                 | Կտմազոցիցիա -ճ/կերամիկա/      | 7          | 2     | 2.86        | 3.50        |               |       | 6             | 1     | 1            | 1     |
| 7                                 | Նյութերի տեխնոլոգիա-6         | 7          | 2     | 3.00        | 4.00        |               |       | 5             |       | 2            | 2     |
| <b>Կուրս ԿԱ IV</b>                |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | XX դար.հայ.արվ.պատ.+          | 16         | 3     | 2.38        | 3.67        | 2             |       | 7             | 1     | 4            | 2     |
| 2                                 | XXդար.արտ.արվ.պատ.+           | 16         | 3     | 2.19        | 3.00        | 1             |       | 12            | 3     |              |       |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ Կիրառական արվեստ</b> |                               |            |       | <b>2.76</b> | <b>3.53</b> |               |       |               |       |              |       |
| <b>Համակարգչային գրաֆիկա</b>      |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| <b>Կուրս ՀԳ I</b>                 |                               |            |       |             |             |               |       |               |       |              |       |
| 1                                 | Գունանկարչություն-2+          | 4          | 2     | 2.75        | 3.50        |               |       | 2             | 1     | 1            | 1     |
| 2                                 | Գծանկարչություն-2+            | 4          | 2     | 3.00        | 3.50        |               |       | 3             | 1     | 1            | 1     |
| 3                                 | Ինֆորմատիկա-2+                | 4          | 2     | 2.25        | 3.00        |               |       | 3             | 2     |              |       |
| 4                                 | Կտմազոցիցիա -2                | 4          | 2     | 3.00        | 4.00        |               |       | 1             |       | 2            | 2     |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ Համակարգչային գր</b> |                               |            |       | <b>2.75</b> | <b>3.50</b> |               |       |               |       |              |       |

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական ասպեկտի ֆակուլտետ

2016-2017 ուս.տարի II կիսամյակ

**Առաջադիմություն**

ընթ.ստ. 1

07/04/2017

| N:                                | Առարկայի անունը             | Ուս.քանակ |       | Միջին գնահ. |             | 0-6-երի քանակ |       | 6,7,8-երի քան. |       | 9-երի քանակ |       |
|-----------------------------------|-----------------------------|-----------|-------|-------------|-------------|---------------|-------|----------------|-------|-------------|-------|
|                                   |                             | ընդհ.     | անվճ. | ընդհ.       | անվճ.       | ընդհ.         | անվճ. | ընդհ.          | անվճ. | ընդհ.       | անվճ. |
| <b>Դիզայն (գեղար)</b>             |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| <b>Կուրս Գ I</b>                  |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| 1                                 | Համակարգչային գրաֆիկա-1     | 7         | 3     | 7.71        | 7.67        |               |       | 5              | 2     | 2           | 1     |
| 2                                 | Քանդակագործություն-1+       | 7         | 3     | 7.57        | 8.00        |               |       | 5              | 2     | 2           | 1     |
| 3                                 | Գեղագիտություն              | 7         | 3     | 5.57        | 5.00        |               |       | 3              | 1     |             |       |
| <b>Կուրս Գ II</b>                 |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| 1                                 | Երթապատի դիզայն-2           | 9         | 3     | 8.11        | 9.00        |               |       | 5              |       | 4           | 3     |
| 2                                 | Համակարգչային գրաֆիկա-3     | 9         | 3     | 7.33        | 8.00        |               |       | 9              | 3     |             |       |
| 3                                 | Մակետավորում և աշխ. կտուր-1 | 9         | 3     | 7.00        | 7.33        |               |       | 9              | 3     |             |       |
| <b>Կուրս Գ III</b>                |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| 1                                 | Տեխնիկական գծագրություն     | 10        | 3     | 7.30        | 8.00        |               |       | 7              | 2     | 2           | 1     |
| 2                                 | XII-XIX դար.հայ.արվ.պատ.+   | 10        | 3     | 5.50        | 7.00        | 1             |       | 6              | 3     |             |       |
| 3                                 | Գունաստեղծություն-2         | 10        | 3     | 6.90        | 8.00        |               |       | 6              | 2     | 1           | 1     |
| <b>Ընդամենը՝ Դիզայն (գեղար)</b>   |                             |           |       | <b>6.99</b> | <b>7.56</b> |               |       |                |       |             |       |
| <b>Կիրառական արվեստ</b>           |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| <b>Կուրս ԿԱ III</b>               |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| 1                                 | Բուտերիեր, կքստերիեր        | 7         | 2     | 8.00        | 8.50        |               |       | 5              | 1     | 2           | 1     |
| <b>Ընդամենը՝ Կիրառական արվեստ</b> |                             |           |       | <b>8.00</b> | <b>8.50</b> |               |       |                |       |             |       |
| <b>Համակարգչային գրաֆիկա</b>      |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| <b>Կուրս ՀԳ I</b>                 |                             |           |       |             |             |               |       |                |       |             |       |
| 1                                 | Գծագրական երկրաչափ-1        | 4         | 2     | 5.25        | 6.50        |               |       | 2              | 2     |             |       |
| <b>Ընդամենը՝ Համակարգչային գր</b> |                             |           |       | <b>5.25</b> | <b>6.50</b> |               |       |                |       |             |       |
| <b>Ընդամենը ֆակուլտետում՝</b>     |                             |           |       | <b>6.99</b> | <b>7.55</b> |               |       |                |       |             |       |

Դեկան՝

Ա.Շ.Մարգարյան